ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 1, 1956 Общественные науки

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ս. Շլեպչյան

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԻ ՃՇՏՈՒՄ

Խաչատուր Աբովյանը «Վերք Հայաստանի» վեպում, նկարագրելով պարսիկների դեմ մղված կռիվները, ջերմ տողեր է գրել Շուլավերցի Սոսիի մասին, որը խոշոր սխրագործություններ է կատարել այդ մարտերում. Աբովյանը գրում է.

«Ախ ում մտքից կերթա էն հսկա կերպարանքը, էն գեղեցիկ պատկերը, էն անոշ լեզուն ու անօրինակ ուշիգությունն ու սիրտը, որ Շուլավերցի Սոսի Աղեն ու Մելիքի Օհանջանն ունէին։ Հրեղեն վիշապի պես ընկել էին Քաշվեթու ու Բոլնիսի սարերը, որ թշնամու առաջը կտրեն, տեղ չտան, ու ինչ ժամանակ խարարը նրանց է հասնում, թե Նեմեցի կոլոնիէն տվին, քառասուն կտրիչ տղերք քամակին, իրանց Մովրովն էլ մեջընեռումը՝ էն վախտն են վրա հասնում, որ քյուրդ Օքյուզ աղեն վազուց կոլոնիեն քանդել ու երեք հազար մարդով էսրների կեսը կոտորել, կեսը առաջն արել տանում ա։ Արինն աչքներն առած ընկնում են էս մեկ բուռ զորքը՝ էն անթիվ բազմությունի եզերքը. քյուրդ ու Ղարափափախ՝ էսրները. տալիս են մեկ քանի մարդի ձեռք ու իրանք էդ դառնում։ Էս միջոցումը Մովրովը հայի զոնշունն առնում, փախչում է, որ իր գլուխը պրծացնի, միմիայն քաջն Սոսի մեկ քարի տակի իր կտրիչ ընկեր Մելիք Օհանջանի հետ՝ դայիմանում ու մեկը մեկին ձեն են տալիս. «Համարդություն ու թուլությունը տղամարդի համար ամոթ ա. քաջությամբ մեռնինք, որ մեր որդիքն էլ իմանան, թէ մենք էլ ենք սիրտ ունեցել ու մեր երկրի թասիրը քաշել, մեր աշխարհի սիրով մեռել։ Էս մուռտառ արինն էլ ինչի ա պետք, որ էսպես օրը չենք թափիլ։ Զոլումը մեռնիլը տղամարդություն է։ Ճանաչ թուրքեր ձեն են տալիս. «Սոսի աղա՝ քո աղ ու հացը շատ ենք կերել, մեր աչքը կրոնի, թէ քեզ վրա թուր բարձրացնենք։ Մենք քեզ կտանենք, սաղ սալամաթ ճամփու կքցենք. մի անիր, գլուխդ մահու մի տար, քեզ ենք ափսոս գալիս արի, քեզ խնայիրա։ Բայց հսկայն Սոսի՝ կասկած ունելով, թէ իրանց կրոնեն, ետիր կանեն, նրանց խոսքին չի նայում, ու առաջի թվանքը որ չի քցում, Օքյուզ աղի տղեն ա սֆթա ձիու շլնքոփ ընկնում։ Կատաղած հարամին ընչանք վրա կհասներ, մեկ տասը-հինգ մարդ էլ սպանում են էս կտրիչ հսկայքը ու թուրները հանած՝ երը բարութները հատնում ա, ընկնում են գազանների մեջը առյուծի պես։ Ընչանք իրանց հոգին կտային, մեկ տասը հոգի էլ թրի են մատաղ անում, ու իրանք Աստծուն մատաղ բլում։

Հանգիստ ձեր սուրբ ոսկերացը՝ ով քաջ նահատակք։ Ձեր ջիվան ջանի արյունն ա, որ էսպես սիրտս կրակում ա։ Ինչ հայ ձեր անունը լսի ու ձեր լիս գերեզմանին ողորմի չասի, ձեր հիշատակը իր սրտումը չգրի։ Մի

իմանաք, թէ ձեր ազիզ արինը նոր տեղը թափվեցավ։ Էդպես պատուական արինն էր, որ Աստծո սիրտը դուք դցեց, մեր աշխարհը աղատեց ու էս օր էլ՝ էն ձեր նահատակության քարի տակիցը ձեն ա տալիս. «Հայր մեզ պես մեռել, որ անուն ճարեք»։

Ուշադրավ է, որ այս հերոսամարտի և հերոսների մասին Շուլավերը գյուղում (այժմ Շահումյան), մինչև այժմ էլ պահպանվել է բանավոր մի պատմություն, որը գիտեն գյուղի հասակավորները, որոնք էլ իրենց հերթին լսել են իրենց ավագներից։ Այդ պատմությունը հիմնականում համընկնում է Արովյանի նկարագրությանը, որոշ տարբերություններով։

Ո՞վ է Սոսի աղեն. պատմական անձնավորություն է, թե վիպային մի հերոս, այս հարցին մինչև այսօր սպառիչ պատասխան չի տրվել, Սոսի աղայի վերաբերյալ գրավոր տեղեկություններ չլինելու պատճառով, չնայած հնարավոր էր ենթադրել, որ ինչպես Արովյանի հերոսներից մի քանիսը, նա էլ եղել է պատմական անձնավորություն։

Այս տարի Շուլավերի հին գերեզմանատնում կատարելով պրպտումներ, մեզ հաջողվեց գտնել Բալանթարյանների տոհմի գերեզմանները, այդ թվում՝ Սոսի աղի ու նրա հոր՝ Բալուի գերեզմանը։ Սոսի աղի շիրիմն ունի ընդարձակ արձանագրություն։ Թե շիրմաքարը և թե արձանագրությունը պահպանված են անվնաս և այդ ըստ երևույթին այն պատճառով, որ, ինչպես պատմում են շուլավերցիները և ինչպես վկայում է շրջապատի ուսումնասիրությունը, ավելի քան մեկ դար այդ շիրիմը ծառայել է որպես ուխտատեղի ու արժանացել ընակչության հատուկ ուշադրությանն ու խնամքին։

Սոսի Աղի գերեզմանաքարն ունի 168 սանտիմետր երկարություն, 30,5 սանտիմետր լայնություն և 68,5 սանտիմետր բարձրություն։ Գերեզմանաքարն ունի պատվանդան, որի բարձրությունը 19 սանտիմետր է, երկարությունը 178 սանտիմետր է։ Պատվանդանի լայնությունը արևմտյան կողմում 60 սանտիմետր է, իսկ արևելյան կողմում 50 սանտիմետր։ Արձանագրությունը, որ գրված է ընդամենը երեք տողի վրա, տապանաքարի լայնությամբ, բոլորագիր է և հետևյալն է.

«Այս է տապան Սոսի աղին, որ է որդի Բալուին Բալանթարեանց. սրով նահատակեցավ ի պատերազմի Հասան խանին և փոխեցաւ տունս վերին. ամի 1826»։

Ինչպես տեսնում ենք, այս արձանագրությունն ամբողջովին համապատասխանում է Խ. Արովյանի նկարագրությանը և դա միանգամայն հասկանալի է։

Ամենայն հավանականությամբ Խաչատուր Արովյանը Սոսի աղի սքրագործությունների հետ կատարված դեպքերը լսել և ուսումնասիրել է տեղում՝ Շուլավերում։

Նախ՝ Արովյանը եղել է Շուլավերում։ Հայտնի է, որ Արովյանի ժամանակաշրջանում Թիֆլիս—Երևան ճանապարհը անցնում էր հետևյալ վայրերով՝ Շուլավեր— Ջալալ-օղլի — Իգդիր, այնտեղից Արդ Ղարաքիլիսա, այժմյան Սպիտակ, Ալագյազ, Ապարան ու Աշտարակ և ապա Երևան։ Խաչատուր Արովյանը մի քանի անգամ պետք է անցած լիներ այդ ճանապարհով։ Առաջին անգամ նա Էջմիածնից Թիֆլիս է մեկնում 1819—1820 թթ.։ Թիֆլիսից Երևան է վերադառնում 1826 թվականին՝ պատերազմը սկսվելուց հետո։ Այնուհետև նա 1830 թվականին նույն ճանապարհով մեկնում

է Դորպատ, իսկ 1843 թվականին Թիֆլիսից մեկնում է Էջմիածին։ Կասկածից վեր է, որ այս ճանապարհորդությունների մեկի ընթացքում նա Շուլավերում կանգ է առել և տեղում ուսումնասիրել պատմական վերոհիշյալ փաստը, իր ամբողջ մանրամասնությամբ, գուցե և անձամբ տեսել



Սոսի աղի գերեզմանը Շուլավերում

է այն գերեզմանաքարը, որ հասել է մինչև մեր օրերը և հանդիսանում է միակ գրավոր պատմական հիշատակարանը՝ Սոսի աղի անձնավորության մասին։

Շուլավերի նույն հին գերեզմանատանը մեզ հաջողվեց գտնել նաև ՀՎԵՐՔ Հայաստանի վեպում հիշատակված Մելիք Օհանջանենց տոհմի գերեզմանները, թեև անմիջապես Մելիք Օհանջանի գերեզմանը չկարողացանք գտնել։